ԱՐԱ ԶՈՀՐԱԲՅԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ Է ‘ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱ’ ՄԻՋՈՑԱՌՄԱՆԸ

30.10.2014 09:18

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը և ՓՊ նախագահի՝ միջազգային հարաբերությունների գծով խորհրդական, խորհրդի անդամ Մարտուն Փանոսյանը մասնակցում են ‘Փաստաբանների ազգային Կոնվենցիա’ միջոցառմանը, որը մեկնարկել է 2014թ. հոկտեմբերի 28-ին՝ Ֆրանսիայի Մոնպելիե քաղաքում: Միջոցառմանը մասնակցում են մոտ 5.000 անձինք՝ Ֆրանսիայի քաղաքների փաստաբանների պալատների նախագահներ, Ֆրանսիայի փաստաբանների ազգային խորհրդի անդամներ, ֆրանսիացի փաստաբաններ և այլ պետությունների փաստաբանական համայնքների մոտ 200 ներկայացուցիչներ:

Այս միջոցառումն անցկացվում է յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ: Այս անգամ միջոցառման վայրը՝ Մոնպելիե քաղաքն է:

Մոնպելիե քաղաքի փաստաբանների պալատի նախագահ Լյուք Քիրքաչարյանը, ով ազգությամբ հայ է, իր բացման խոսքում ողջունել է Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի մասնակցությունը այդ միջոցառմանը, նշելով, որ ցեղասպանության 100 ամյակի տարելիցին ընդառաջ այս հանդիպումը առավել կամրապնդի փոխադարձ կապերը:

Մոնպելիե քաղաքի փաստաբանների պալատի նախագահը մեծ դերակատարություն է ունեցել քաղաքում ցեղասպանության զոհերի հուշարձանի տեղադրման հարցում և 2015թ. ապրիլի 24-ին մասնակցելու է Հայաստանում ցեղասպանության 100 ամյակի տարելիցին:

Միջոցառումը կավարտվի հոկտեմբերի 31-ին և այս օրերի ընթացքում քննարկվելու են փաստաբանությանը վերաբերվող տարբեր թեմաներ, մասնավորապես՝ Իրավական պաշտպանությունը տնտեսական աճի ներքո, Փաստաբանը բարձր տեխնոլոգիաների ժամանակաշրջանում, Փաստաբանը, որպես ձեռնարկատեր, Փաստաբանական գործունեության իրականացման նոր ձևեր, Փաստաբանական գրասենյակների տնտեսական նոր մոդելներ և կառավարման ստրատեգիա:

National
CONFÉDÉRATION NATIONALE DES AVOCATS
ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA



ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA



Առաջարկվող նորություններ

25.10.2013ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԳԻԼԴԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

06.11.2013 ԱՐԹՈՒՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ ՆՇԱՆԱԿՎԵԼ Է ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

07.11.2013ԱՐԱ ՋՈՀՐԱԲՅԱՆԻ ԳԼԽԱՎՈՐԱԾ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԿՄԵԿՆԻ ԱՐՑԱԽ

11.11.2013ԱՄՓՈՓՎԵԼ Է ԱՐԱ ՋՈՀՐԱԲՅԱՆԻ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂ ԿԱՏԱՐԱԾ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })